614

1. Հորիզոնն է անհաս ինձ փայլում,
Իմ հոգին կարոտով է լեցուն,
Պիտ հասնեմ այն եզերքն փառավոր,
Ուր պայծառ է անվերջ առավոտ:

Առավոտ, առավոտ.
Եվ փրկված հոգիներ բյուրավոր:
Պիտ տրվեն քնարներ ամենքին,
Որ գովեն Գառնուկին փառավոր:

2. Բայց ունենք կարճ ճամփա քայլելու,
Եվ փշոտ է ճամփան ու քարոտ:
Կուղեկցի մեզ այնտեղ Սուրբ Հոգին,
Ուր պայծառ է, անվերջ առավոտ:

3. Ջինջ երկինքն է անվերջ ինձ փայլում,
Եվ իմ սիրտը երկինք է ձգտում:
Ժառանգեմ այն քաղաքը ոսկյա՝
Պատրաստված Քրիստոսով զորավոր:

Ալելուիա՛, ալելուիա՛,
Իմ տունը երկիքն է հավիտյան:
Ալելուիա, ալելուիա,
Քրիստոսն է Փրկիչս միմիայն: